Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. ապրիլի 21-ից հետո ձեռք բերված հիմնական միջոցների հաշվառման և վերաբաշխման վերաբերյալ

2020 թվականի ապրիլի 21-ից մինչև հունիսի 01-ը ընկած ժամանակահատվածում համայնքի ֆոնդային բյուջեի միջոցների հաշվին ձեռք է բերվել ընդհանուր 12 516 200 դրամի չափով հիմնական միջոցներ, նույն թվում ծառայողական ավտոմեքենա 6400.0 հազար դրամ արժեքով, համերգային պրոֆեսիոնալ ձայնային սարքավորումներ 1 կոմպլեկտ 3865.0 հազար դրամ արժեքով, թիվ 2 մանկապարտեզի համար մանկական մահճակալներ, զգեստապահարաններ և ֆիզկուլտ դահլիճի պահարաններ՝ 2251.2 հազար դրամ արժեքով:

Ձեռք բերված հիմնական միջոցները հաշվառվել է գույքի հաշվառման մատյաններում, ներառվել է հաշվապահական հաշվեկշռում որպես հիմնական միջոց:

Առաջարկվում է ստացված հիմնական միջոցները բաշխել ըստ անհրաժեշտության՝ ծառայողական ավտոմեքենան հատկացնել Մասիսի քաղաքապետարան համայնքային կառավարչական հիմնարկին սեփականության իրավունքով, համերգային պրոֆեսիոնալ ձայնային սարքավորումները՝ հաշվեկշռից- հաշվեկշիռ Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ին օգտագործման իրավունքով, թիվ 2 մանկապարտեզի համար ձեռք բերված մանկական մահճակալները, զգեստապահարանները և ֆիզկուլտ դահլիճի պահարանները հաշվեկշռից- հաշվեկշիռ օգտագործման իրավունքով հատկացնել մանկապարտեզին: /Ցանկը՝ կից հավելվածում/:

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն. Սահակյան